

Կալիֆոռնիա նահանգի Վերականգնման դեպարտամենտի
Շահառուի ամփոփաթեթ
«Աշխատանքի տոմս» ծրագրի վերաբերյալ

Ի՞նչ է «Աշխատանքի տոմս» ծրագիրը:

«Աշխատանքի տոմս» (Ticket to Work, TTW) աշխատանքային գործունեության խթանման կամավոր ծրագիր է Սոցիալական ապահովագրության վարչության (Social Security Administration, SSA) աշխատունակության կորստի դեպքում սոցիալական ապահովագրության (Social Security Disability Insurance, SSDI) կամ սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտի (Supplemental Security Income, SSI) շահառուների համար, ովքեր 18-ից 64 տարեկան են և հետաքրքրված են աշխատանքով: TTW ծրագրի նպատակն է շահառուներին օժանդակել աշխատանք ձեռք բերելու և ինքնուրույն դառնալու ուղղությամբ աշխատելու հարցում:

Ինչպե՞ս իմանամ՝ արդյոք իրավունք ունեմ օգտվելու TTW ծրագրից:

Եթե Դուք 18-ից 64 տարեկան եք և ներկայումս SSI և (կամ) SSDI եք ստանում, կարող եք տեղեկատվություն ստանալ TTW ծրագրի վերաբերյալ: Եթե ուզում եք իմանալ, թե արդյոք TTW-ից օգտվելու իրավունք ունեք, ապա Դուք (կամ Ձեր DOR խորհրդատուն) կարող եք զանգահարել SSA-ի TTW Օգնության ծառայության անվճար 866-968-7842 հեռախոսահամարով: TTW ծրագրին մասնակցելու համար հարկավոր չէ թղթային Տոմս ունենալ:

Ես TTW-ից օգտվելու իրավունք ունեմ: Ի՞նչ անեմ հիմա:

Եթե հետաքրքրված եք աշխատանքով, TTW ծրագիրը կարող է լինել Ձեր բանալին՝ մուտք գործելու մասնագիտական վերականգնման, գործնական ուսուցման և աշխատանքի տեղավորման ծառայություններ, ինչպես նաև օգտվելու այլ ծառայություններից և աջակցությունից, որոնք Ձեզ կօգնեն հասնել Ձեր աշխատանքային նպատակներին: Եթե TTW-ից օգտվելու իրավունք ունեք և ուզում եք գնալ աշխատելու, կարող եք օգտագործել Ձեր Տոմսը, որպեսզի աշխատանքի տեղավորման ծառայություններ և աջակցություն ստանաք նահանգային մասնագիտական վերականգնման (Vocational Rehabilitation, VR) գործակալություններից, ինչպիսին է Վերականգնման դեպարտամենտը (Department of Rehabilitation, DOR), կամ կարող եք այդ գործը հանձնարարել SSA-ի կողմից հաստատված ծառայության մատակարարին, որը կոչվում է «Զբաղվածության ապահովման ցանց» (Employment Network, EN): Ձեր Տոմսը չի կարող հանձնարարվել EN-ին և միաժամանակ գործածվել DOR-ի կողմից:

Ի՞նչ կպատահի, եթե որոշեմ ծառայություններ ստանալ Վերականգնման դեպարտամենտից (DOR):

DOR խորհրդատուն կորոշի Ձեր համապատասխանությունը պահանջներին և ծառայություններից օգտվելու առաջնահերթությունը, և Դուք DOR խորհրդատուի հետ միասին կմշակեք Ձեր Անհատականացված պլանն աշխատանքի ընդունման համար (Individualized Plan for Employment, IPE): Ձեր IPE-ն կորոշի առանձնահատուկ աշխատանքային նպատակ և կներառի Ձեր աշխատանքային նպատակին հասնելու համար անհրաժեշտ ծառայությունները: Դուք կամ Ձեր ներկայացուցիչը (եթե ունեք ներկայացուցիչ) և DOR խորհրդատուն կստորագրեն IPE պլանը, նախքան DOR խորհրդատուն կարող է թույլատրել ծառայությունները: DOR խորհրդատուն Ձեր IPE պլանի մի օրինակ դուրամատչելի ձևաչափով կհանձնի Ձեզ:

Հենց որ Ձեր IPE պլանը հաստատվի և ստորագրվի Ձեր և DOR խորհրդատուի կողմից, Ձեր Տոմսը DOR-ում կստանա «Գործածվում է» կարգավիճակ: Եթե Ձեր Տոմսը ներկայումս հանձնարարված է EN-ին, անհրաժեշտ կլինի այն հանել հանձնարարությունից, քանի դեռ ծառայություններ եք ստանում DOR-ից: Այն ընթացքում, երբ օգտագործում եք Ձեր Տոմսը, SSA-ը Ձեզ կազատի

անաշխատունակության բժշկական վերազննություններից (բժշկական Continuing Disability Reviews, CDRs) այնքան ժամանակ, քանի դեռ գործուն մասնակցություն ունեք ծրագրում և համապատասխանում եք SSA-ի «Պատեհաժամ առաջընթացի հենանիշերին» (տես կից ներկայացված «Պատեհաժամ առաջընթացի ամփոփում» (Timely Progress Review, TPR) աղյուսակը): SSA-ն տարեկան TPR գրություն կուղարկի Ձեզ: Եթե զգում եք, որ ի վիճակի չեք համապատասխանել SSA-ի «Պատեհաժամ առաջընթացի հենանիշերին» և չեք ուզում ստանալ TPR ծանուցագրեր, կարող եք պահանջել Ձեր Տոմսի ապաստիվացում՝ հեռապատճենի 703-893-4020 համարով գրավոր խնդրագիր ներկայացնելով Maximus-ին: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Դուք չեք ազատվի բժշկական CDR-ից, քանի դեռ Ձեր Տոմսն ապաստիվացված է: Եթե ի վիճակի չեք համապատասխանել SSA-ի «Պատեհաժամ առաջընթացի հենանիշերին», կարող եք, այնուամենայնիվ, շարունակել ծառայություններ ստանալ DOR-ից:

Երբ Ձեր DOR գործը փակվի, կարող եք Տոմսը հանձնարարել Ձեր ընտրած EN-ին: Եթե Դուք սկզբնապես որևէ EN-ից ուղղորդվել էիք դեպի DOR, ապա Ձեր DOR խորհրդատուն Ձեզ հետ կուղարկի դեպի այդ EN-ը: Երբ Ձեր DOR գործը փակվի, Դուք 90 օր կունենաք Ձեր Տոմսը որևէ EN-ի հանձնարարելու համար, եթե ցանկանում եք շարունակել ազատված լինել բժշկական CDR-ներից: Ձեր Տոմսը որևէ EN-ի հանձնարարելը կատարվում է կամավորության սկզբունքով: EN-ները հոյակապ ռեսուրսներ են Ձեզ համար, որովհետև կարող են տրամադրել շարունակական աջակցության ծառայություններ, աշխատանքի պահպանման ծառայություններ և օժանդակություններ, որոնք օգնում են պահել Ձեր աշխատանքն ու մեծացնել եկամուտները:

Կարող եք հավանության արժանացած տարածքային EN-ների ցանկը ստանալ www.chooseworkttw.net կայքից կամ զանգահարելով SSA-ի TTW Օգնության ծառայության անվճար 866-968-7842 հեռախոսահամարով:

Ի՞նչ են աշխատանքային գործունեության խթանման միջոցները:

Աշխատանքային գործունեության խթանման միջոցները SSA-ի կանոններ են, որոնք հաշմանդամություն ունեցող և SSDI ու SSI ստացող մարդկանց համար հնարավոր են դարձնում ուսումնասիրել աշխատանքի տարբերակները և հասնել իրենց աշխատանքային նպատակներին՝ առանց նպաստներից վաղաժամ զրկվելու: Սոցիալական ապահովության աշխատանքային գործունեության խթանման միջոցները շահառուներին օգնում են հաղթահարել աշխատանք ձեռք բերելու արգելքները՝ առաջարկելով աջակցման ծառայություններ և տրամադրելով սոցիալական պաշտպանության համակարգ, որը շահառուներին օգնում է գտնել իմաստավոր աշխատանք և հաջողության հասնել աշխատավայրում:

Ի՞նչ է պետք անել, եթե հարցեր ունենամ աշխատանքային գործունեության խթանման միջոցների վերաբերյալ, և ինչպե՞ս են աշխատանքն ու եկամուտն անդրադառնալու իմ SSDI կամ SSI նպաստների վրա:

SSA-ի TTW Օգնության ծառայությունը հասանելի է երկուշաբթի – ուրբաթ օրերին, հյուսիսամերիկյան արևելյան ժամանակով (EST) ժամը 8:00-ից մինչև 20:00-ը՝ պատասխանելու աշխատանքային գործունեության խթանման միջոցների վերաբերյալ հարցերին և այն հարցերին, թե ինչպես ոչ լրիվ դրույքով, լրիվ դրույքով կամ սեզոնային աշխատանքը կարող է ազդել Ձեր SSDI կամ SSI նպաստների վրա՝ 1-866-968-7842 (ձայնային) կամ 1-866-833-2967 (TDD), www.chooseworkttw.net:

Նպաստների և զբաղվածության վերաբերյալ գործիքներ և տեղեկություններ կարող եք գտնել «Հաշմանդամության նպաստներ 101» (Disability Benefits 101) կայքում՝ www.disabilitybenefits101.org

Աշխատանքի տոմս» ծրագրի վերաբերյալ ավելին իմանալու համար դիմեք՝

- SSA-ի TTW Օգնության ծառայություն՝ ստուգելու Ձեր Տոմսի կարգավիճակն ու իրավունակությունը և պատասխան ստանալու TTW-ի և աշխատանքային գործունեության խթանման միջոցների մասին Ձեր հարցերին՝ 1-866-968-7842 (ձայնային) կամ 1-866-833-2967 (TDD), www.chooseworkttw.net:
- «Աշխատանքային գործունեության խթանման միջոցների պլանավորում և աջակցություն» (Work Incentives Planning and Assistance, WIPA) նախագծեր՝ www.chooseworkttw.net :
- Սոցիալական ապահովագրության վարչություն (SSA)՝ պատասխանում է TTW-ի կամ SSA-ի վերաբերյալ հարցերին՝ 1-800-772-1213 (ձայնային) կամ 1-800-325-0778 (TDD). SSA-ի «Աշխատանքի տոմս» ծրագրի կայք՝ www.ssa.gov/work:
- DOR-ի «Աշխատանքի տոմս» ծրագրի Օգնության անվճար ծառայություն՝ պատասխանում է TTW-ի վերաբերյալ ընդհանուր բնույթի հարցումներին և ուղղորդում է դեպի DOR-ի տեղական գրասենյակ՝ 1-866-449-2730 (ձայնային) կամ 1-866-359-7705 (TDD) կամ էլեկտրոնային փոստ՝ TTWinfo@dor.ca.gov:
- Հաճախորդի աջակցման ծրագիր՝ 1-800-952-5544 (ձայնային) կամ 1-866-712-1085 (TDD):
- Հաշմանդամության նպաստներ 101՝ «Աշխատում ենք հաշմանդամությամբ՝ Կալիֆոռնիայում» (Working with a Disability in California) կայք www.disabilitybenefits101.org:

Կից փաստաթուղթ՝ SSA-ի «Պատեհաժամ առաջընթացի ուղեցույցներ»

**Պատեհաժամ առաջընթացի ուղեցույցներ
Առաջընթացի ամփոփման յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում**

**1-ին 12 (տոմսի օգտագործումից 12 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Փորձնական աշխատանքի մակարդակի (Trial Work Level, TWL) աշխատանքի ամբողջական 3 ամիս, ԿԱՄ

- ստանալ ընդհանուր կրթության ատեստատ կամ ավագ դպրոցի դիպլոմ, ԿԱՄ
- ավարտել ուսումնական տարվա ցերեկային դասընթացի 60%-ը քոլեջում կամ տեխնիկական, առևտրային կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրում, ԿԱՄ
- լրացնել այս աշխատանքի և կրթության պահանջի համակցությունը

**2-րդ 12 (տոմսի օգտագործումից 13-24 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Փորձնական աշխատանքի մակարդակի (TWL) աշխատանքի ամբողջական 6 ամիս, ԿԱՄ

- ավարտել ուսումնական տարվա ցերեկային դասընթացի 75%-ը քոլեջում կամ տեխնիկական, առևտրային կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրում, ԿԱՄ
- լրացնել այս աշխատանքի և կրթության պահանջի համակցությունը

**3-րդ 12 (տոմսի օգտագործումից 25-36 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Էական և եկամտաբեր գործունեության (Substantial Gainful Activity, SGA) մակարդակի աշխատանքի ամբողջական 9 ամիս, ԿԱՄ

- ավարտել լրացուցիչ ցերեկային ուսուցման ուսումնական տարի, ԿԱՄ
- ավարտել քոլեջի 2-ամյա կամ 4-ամյա ծրագիր, ԿԱՄ
- ավարտել 2-ամյա տեխնիկական, առևտրային կամ մասնագիտական վերապատրաստման ծրագիր, ԿԱՄ
- լրացնել այս աշխատանքի և կրթության պահանջի համակցությունը

**4-րդ 12 (տոմսի օգտագործումից 37-48 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Էական և եկամտաբեր գործունեության (SGA) մակարդակի աշխատանքի ամբողջական 9 ամիս, ԿԱՄ

- ավարտել լրացուցիչ ցերեկային ուսուցման ուսումնական տարի, ԿԱՄ
- լրացնել այս աշխատանքի և կրթության պահանջի համակցությունը

**5-րդ 12 (տոմսի օգտագործումից 49-60 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Էական և եկամտաբեր գործունեության (SGA) մակարդակի աշխատանքի ամբողջական 6 ամիս՝ առանց SSDI և (կամ) SSI դրամական նպաստներ ստանալու աշխատած ամիսների ընթացքում, ԿԱՄ

- ավարտել լրացուցիչ ցերեկային ուսուցման ուսումնական տարի, ԿԱՄ
- ավարտել 4-ամյա բարձրագույն կրթության ծրագիր

**612 (տոմսի օգտագործումից 61-72 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Էական և եկամտաբեր գործունեության (SGA) մակարդակի աշխատանքի ամբողջական 6 ամիս՝ առանց SSDI և (կամ) SSI դրամական նպաստներ ստանալու աշխատած ամիսների ընթացքում, ԿԱՄ

- ավարտել 4-ամյա բարձրագույն կրթության ծրագիր

**7-րդ 12 (տոմսի օգտագործումից 73-84 ամիս անց)
ամիսներ** • լրացնել Էական և եկամտաբեր գործունեության (SGA) մակարդակի աշխատանքի ամբողջական 6 ամիս՝ առանց SSDI և (կամ) SSI դրամական նպաստներ ստանալու աշխատած ամիսների ընթացքում *

*Ուղեցույցները ցանկացած հետագա 12-ամսյա Առաջընթացի ամփոփման համար նույնն են, ինչ 7-րդ 12-ամսյա Առաջընթացի ամփոփման համար: